

ըզգեստու նորա: Որ եւ յայտնագոյն իսկ երեւի. զի ըստ բազդատուութեան երկնաւորացն. եւ մերս եկեղեցական կատարողպետութեան կարգ տեսանի: եւ Նոյն նշոյլք ճառագայթեալ երեւի յերկրաւոր Քահանայպետութեանս Սրբազնպետութիւն. ներմարմնաւորութեամբ Որգւոյն միածնի: Որով եւ գրէ թէ, գեր երկնպանծ գտաւ մերս զինուորեցեալ եկեղեցւոյ կարգպետութիւնն. զի ըստ Առաքելոյն Պօղոսի՝ յեկեղեցւոյ ուսան զբազմապատիկ զիմաստութիւնն: Որ եւ յաւէտագոյն տարածումն ի Քրիստոսէ սկզբնաւորեալ. մինչեւ ցայսօր. եւ ցյաւիտենիս վախճան ներգործի յամենայն ազգ քրիստոնէից, աւանդօրէն պարզեւմամբ միմեանց. ըստ կարգի յառաջացելոց. յարժանաւորութիւն Աստիճանի, եւ պատուոյ: Ի վեհագոյն գլխոյ անտի սկսեալ. մինչեւ ի հուսկ սպասաւորսն: Ա՛րգ՝ վասն որոյ վերջապէս կրկին զայս ծանիք ամենեքին: զի բաղձալի, եւ զբազում երկամբք ծնեալ զաւակն Պատրիարգ Արարապետ Եղբօրս մերոյ, զՏէր Սարգիս Շնորհալի Արարապետն Սրբազնագործեցաք ի կարգս Եպիսկոպոսութեան: Եւ եղաք իբրեւ զճրագ ի վերայ աշտանակի սրբոյ եկեղեցւոյ. լուսատու լինել ամենեցուն ոյք կարօտին: եւ Առաջնորդել որոց պիտոյանայ: Խրատել զտաճակն. յուզղութիւն ածել զյանցաւորս: յանդիմանել զոչ եկեալսն յօրէնս Տեառն: Հաստատել զգայթակղեալսն: կանգնել զգլորեալսն: Եւ որ ինչ վայելէ պաշտօնին իւր. առնել առանց երկիւղի, եւ ձանձրանալոյ: Մի ոք իցէ որ սմա հակառակ կայցէ. կամ ընդ դիմակ երեւեսցի: Ձի դէպ ի սա հակառակօղքն. մեզ. եւ Քրիստոսի հրամանին են հակառակք. պպեալն ի սմանէ կպեալ, եւ արձակեալն, արձակեալ, ըստ քրիստոսի Պատուիրանին: Պատուեսցի, եւ ընկալցի յամենեցունցդ. իբրեւ զՊաշտօնեայ Քրիստոսի, եւ